ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

4 հունվարի 2024 թվականի N 8 - Ա

«ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՕՊԵՐԱՏՈՐ», «ԵՐԵՎԱՆԻ ՋԵՐՄԱ-ԷԼԵԿՏՐԱԿԵՆՏՐՈՆ», «ԲԱՐՁՐԱՎՈԼՏ ԷԼԵԿՏՐԱՑԱՆՑԵՐ» ԵՎ «ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱ-ՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ՎՃԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆ-ՆԵՐԻ ՉԱՓԵՐԸ ՆՎԱԶԵՑՆԵԼՈՒ ԵՎ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՆԵՐՆ ԱՎԵԼԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ, 35-րդ և 49-րդ հոդվածներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մարտի 3-ի N 202-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգի դրույթները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր», «Երևանի ջերմա-էլեկտրակենտրոն», «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» և «Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերությունների 2022 թվականի գործու-նեության արդյունքներով Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հանդեպ առաջացած համապատասխանաբար՝ 956,690.0 հազ. դրամ շահութա-բաժնի պարտավորությունը նվազեցնել 934,190.0 հազ. դրամ, 17,400,693.0 հազ. դրամ շահութաբաժնի պարտավորությունը նվազեցնել 16,635,368.0 հազ. դրամ,

10,590,526.0 հազ. դրամ շահութաբաժնի պարտավորությունը նվազեցնել 10,550,526.0 հազ. դրամ և 5,157,427.5 հազ. դրամ շահութաբաժնի պարտավորությունը նվազեցնել 4,993,913.0 հազ. դրամ գումարների չափերով:

2. «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր», «Երևանի ջերմաէլեկտրակենտրոն», «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» և «Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերությունների՝ սույն որոշման 1-ին կետով նվազեցվող շահութաբաժինների պարտավորությունների (համապատասխանաբար՝ 934,190.0 հազ. դրամ, 16,635,368.0 հազ. դրամ, 10,550,526.0 հազ. դրամ և 4,993,913.0 հազ. դրամ) չափերով տեղաբաշխված բաժնետոմսերի անվանական արժեքների մեծացման միջոցով՝ սահմանված կարգով ապահովել «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր», «Երևանի ջերմաէլեկտրակենտրոն», «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» և «Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերությունների կանոնադրական կապիտալների ավելացումները:

3. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո սահմանված կարգով ապահովել «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր», «Երևանի ջերմաէլեկտրակենտրոն», «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» և «Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերությունների կանոնադրական կապիտալների փոփոխումը և դրանով պայմանավորված՝ կանոնադրությունների մեջ կատարվող փոփոխությունների պետական գրանցումները՝ իրականացնելով «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր», «Երևանի ջերմաէլեկտրակենտրոն», «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» և «Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերությունների միջոցների հաշվին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

04.01.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ